

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Tiflis, Redaction „Mschak“.
Տէլեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով.

Ցայտարարութիւնները համար վճարում են
խմբագրութիւնը բացին 2 կոպեկ.
Տէլեֆոն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տխուր երեւոյթ. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մա-
մուլ. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ամերիկայից.
Արտաքին լուրեր. — ՀԱՌԱՊԵՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հասարակա-
կան հոսանքներ:

ՏԵՐԻՐ ԵՐԵՒԱՆԻ

Մենք յայտնեցինք, որ Թիֆլիսի քաղա-
քային դռման իր վերջին նիստում միա-
ձայն որոշում կայացրեց դատի ենթար-
կել ձայնաւոր իշխան Նիկոլայ Թումանովին
այն կեղծ ու մեծ երկ համար, որոնք նը-
կատված են Թիֆլիսի մի քանի կալուածը-
ները դոկումենտներով մէջ և որոնցով քա-
ղաքի ու մասնաւոր անձանց կալուածները
պէտք է դառնային մեղադրողի հօր և
քոյրերի սեփականութիւն: Դռման ինքը
դատարան չը հանդիսացաւ այդ խնդրում
և չը բնեց զործին վերաբերեալ թղթերը
և բացատրութիւնները, այլ բաւականա-
յով ուսուցիչական վերաբերմամբ, ուղղեց զործը
դատաստանական հիմնարկութեանը, որը
և կը բնի ու կուսումնասիրի դատը այն
բոլոր մանրամասնութիւններով, որոնք ան-
հրաժեշտ են յանցանքը պարզելու և ու-
րոշելու համար: Այդպէս է թելադրում
քաղաքային կանոնադրութիւնը, որով դե-
կարվում է իր գործառնութիւնների մէջ
ինքնավարական մարմինը:

Ներկայ դէպքը, որ բացառիկ է մեր
կովկասեան քաղաքների ինքնավարութեան
կենտրոն, շատ ծանր տպաւորութիւն
գործեց Թիֆլիսի դռմային ձայնաւորների
փրա: Նա նորքան ծանր ազդեցութիւն կը
թողնի մեր ամբողջ հասարակութեան վրա,
որը անկարող է հաշտվել այն մտքի հետ,
թէ քաղաքային ձայնաւորը, փոխանակ չա-
րագործութիւնները հալածելու, զեղծում-
ների դէմ մաքառելու, կեղծիքները մեր-
կայնելու և պատժելու, կարող է ինքը ի-
րան թող տալ կատարելու անօրինակ

ստոր զեղծութիւն: Ազգաբնակչութիւնը ան-
ւանում է քաղաքային ինքնավարութեան
մէջ գործող ձայնաւորին «քաղաքի հայր»
և սպասում է, որ այդ հայրը պէտք է
պաշտպանի քաղաքի և նրա բնակիչների
արդար շահերը և իրաւունքները. իսկ
այժմ նա հանդիսանում է մի յուսահատեց-
նող մեղադրանքի, որով քաղաքի հայրերից
մէկը, որ պէտք է հսկէր կալուածների
գնահատութեան հարցին, ձանձուղում է
իրեն թշնամի այդ շահերին և իրեն ու-
րիշների սեփականութեան իւրացնող:

Անհասկած, Թիֆլիսի ձայնաւորները և
ամբողջ հասարակութիւնը ուրախ կը լի-
նեն, որ մեղադրեալը կարողանաւ ապա-
ցուցանել իր անմեղութիւնը և երևան
գար, որ կեղծիքի հեղինակը մի ուրիշ, աւելի
բարոյական պատասխանատուութիւն
կրող անձնաւորութիւն է: Բայց եթէ մե-
ղադրողը իսկական յանցաւոր է, այն ժա-
մանակ երևան կը գայ մեր հասարակական
դատարարութեան ամենախիղճը կողմե-
րից մէկը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Հնադարեան մի ցաւ, որից չէ կարողանում
աղատել մարդկութիւնը, ապօրէն դատակների
հարցն է: Բարոյական և հումանիտարական հաս-
կացողութիւնները էվոլյուցիայի երկար շրջա-
նի են անցկացրել, շատ բան են մեղմացրել,
շատ անադարարութիւններ են վերացրել բայց
մինչև այժմ հասարակութեան խորթ, անօրին
անդամներ են համարվում այն խեղճ երեխանե-
րը, որոնք օրինաւոր ամուսնութիւնից դուրս
ծնվելու դժբախտութիւնն են ունեցել: Ինչպէս
յայտնի է, առասաց օրէնսդրութիւնը վերջին
ժամանակներում մի քանի քայլեր արեց ապօրէն
դատակների դրութիւնը թեթեւացնելու համար:
Նա թողարկեց մի քանի դէպքերում որդեգրել
ապօրէն դատակներին և այդպիսով տուեց նրանց
քաղաքացիական իրաւունքներ ստանալու մի
քանի միջոցներ: Բայց բաւական էին այդ քա-

ղաքացիութիւնը իրաւունքները միայն իր
դատարանի մէջ քննում է այդ հարցը: Նա դու-
նում է, որ օրէնքը առհասարակ խիստ է վերա-
բերվում ապօրէն երեխաներին:

Երևակայեցէ՛ք—ասում է լրագրիւր,—թէ սպա-
նութիւնները միանգամայն վերացնելու կամ
նրանց թիւը պակասեցնելու համար, մեղ ա-
մենք, որ կարող ենք զոհեր դառնալ, ա-
ռանձին առանձին փակէին բանտի մէջ: Այս
միջոցը գոյց է և փրկարար լինէր, բայց խոս-
տովանեցէ՛ք, առնուազն շատ էլ տարօրինակ
կը լինէր: Մեր օրէնքների խիստ վերաբե-
րեալը դէպի այն դժբախտ երեխաները, ո-
րոնք այդ օրէնքից դուրս են, ունի այն նպա-
տաւը, որ, ինչպէս ասում է նոյն օրէնքը,
այդպիսով պակասեցնելու ապօրէն կենսակո-
ւորների թիւը:

Օրէնքը թող է տալիս, որ չամուսնացած
տղամարդն ու կինը իրանցից ծնված երեխային
օրինաւոր համարեն, երբ կամուսնանան միմեանց
հետ: Բայց երբ կամ տղամարդը կամ կինը ա-
մուսնացած են և ապօրէն կենսակոչութիւնն ու-
նեն միմեանց հետ ու այդ կենսակոչութիւնից ե-
րեխայ է ծնվում, այդ դէպքում երեխան չէ ճա-
նաչվում օրինաւոր, իրեն չնայածից առաջ ե-
կած մի պտուղ:

Ինչո՞ւ, հարցնում է լրագրիւր:—Միթէ այդ
խեղճ երեխաները մի որ և իցէ բանով վատ
են միւս իրանց նմանները, որոնք ծնվել են
չամուսնացած ծնողներից: Կինը մեծ մասամբ
կենսակոչում է մի ուրիշ հետ սիրող զրոյմաբ,
իսկ տղամարդը ընդհակառակն—անառակու-
թեան կամ անդործութեան պատճառով: Տը-
ղամարդը համար մի ուրիշ կնոջ հետ ապ-
րել ֆարս է, իսկ կնոջ համար—դրամա:
Այդ դրաման տրաքելիս է դառնում, երբ
տղամարդը յաղթնում է և դէն է գցում իր
սիրտհուն, մի բան, որ շատ է պատահում
ժամանակը այն ժամանակ, երբ երեխայ էլ է
ծնվում: Հասարակութիւնը, որ դուրս է
գրականութեան մարդասիրութիւնը, վէպերի
համաձայն չէ ապրում, այլ օրէնքների համա-
ձայն: Նման օրէնքը մի թիւ մարդասիրութիւն
փոխ առնէ գրականութիւնից, այն ժամանակ
հասարակութիւնն էլ, ունենալով կատարելա-
պէս օրինակաւ հիմք, շատ հարցերի մէջ
կը մեղմացնէ իր դատողութիւնները:

Օրէնքը պարտաւորեցնում է, որ հայրը
կերակրէ իր ապօրէն դատակին, բայց այդ պար-
տաւորութիւնը դրոյթիւն ունի միայն այն հօր
համար, որ ամուսնացած չէ:

Նիստները գտնում են բարբերի ոստիկանու-
թեան սխտէտում, գտնում է և այն, որ այդ
սխտէտը ծանրանում է միմիայն աղքատ անա-
ռակ կանանց վրա, մինչդեռ հարուստները շատ
հեշտութեամբ ազատվում են ոստիկանական
հսկողութիւնից: Ինչ վերաբերում է անառակու-
թեան, ճառարասը կապում է այդ երեւոյթը կա-
պիտալիստական կազմակերպութեան հետ: Քա-
նի կայ այդ կազմակերպութիւնը, դրոյթիւն
կունենայ և անառակութիւնը, որ, գրեթէ ամ-
բողջապէս, պատկերվում է ծնունդն է: Լէդրի-
Ռոլլին ասում էր, թէ անառակութիւնը անհրա-
ժեշտ մասն է կազմում անգլիոնի բանտը կնոջ
օրական աշխատանքի: Նոյնն է և ամեն տեղ,
ուր տիրապետում է կապիտալը: Հետևաբար,
բանի դրոյթիւնն ունի այդ տիրապետութիւնը,
միամտութիւնն է, ճառարասը և իր համասո-
նների կարծիքով, յուսալ, թէ կարող է բոլոր-
վին վերանայ անառակութիւնը: Սակայն աւե-
լորդ չէ կուել նրա դէմ և ներկայ պայմանե-
րում, բայց ոչ, ի հարկէ, բարբերի ոստիկանու-
թեան միջոցով:

Բժշկուհի Պելլիսկա (Բէրնից) ապացուցանում
է, որ բարբերի ոստիկանութիւնը միջին դարե-
րի մնացորդ է: Դիմելով տղամարդկանց, նա
բացականչում է. «Բարբ օւղում էք օրէնքներ
ստեղծել առանց մեր օրէնքի, դոնէ լաւ օ-
րէնքներ ստեղծէք ուրեմն»:

Signal-ի տնօրէն պ. Նաստան (Պարիզից) հա-
մարում է անառակութիւնը եռակի հետեանը
գինեմոլութեան, անբարոյական գրականութեան
և կանանց բանտարկութեան չնչնութեան:
Օրիորդ դը Սենտ-Կլոտ պնդում է, թէ կա-
նանց անառակութեան մեղքը ընկնում է հա-
սարակութեան վրա, որ թող է տալիս, որ օրը
տառնվեց ժամ աշխատող կինը վատաւի ընդա-

Այս սահմանափակումը շատ գործնական է.
բաւական է կատարել մի լրջութիւն, այսինքն
դէն չպրտել յղի սիրտհուն և երկրորդ լրջու-
թեան ձեռք տալ, այսինքն ամուսնանալ մի
ուրիշ կնոջ հետ—և ահա կարելի է թողու-
թիւն ստանալ բոլոր անցեալ մեղքերի հա-
մար. այս միջոցին կը դիմեն, ի հարկէ, շատ
«հերոսներ»:

Արդարութիւնը օրէնքի ամենամեծ և ա-
ռաջնակարգ նպատակն է: Հասարակութեան
մէջ արդարութեան սկզբունքները հաստատելու
համար անհրաժեշտ է թող չը տալ, որ այսպի-
սի դէպքեր տեղի ունենան: Ապօրէն, իրաւա-
դուրկ երեխաների դրոյթիւնը վնասակար ե-
րեւոյթ է թէ հասարակական և թէ պետական
տեսակէտից: Քանի քանի անմեղ էակներ չարա-
վում են փողոց, թաղվում են կեղտերի մէջ,
կամ վաղաժամանակ գերեզման են մտնում կամ
անբարոյականութեան տիղմի մէջ են թաղվում
և դառնում են հասարակութեան համար չարիք:
Քաղաքակրթ աշխարհը հեծում է այս դրու-
թիւնից: Ապօրէն դատակների ամբողջ սարսա-
փելը դրութիւնը ըմբռնելու համար բաւական
է կարգաւ մի քանի դրու Ջոյայի «Fécondité»
վէպից: Ռուսաստանը դեռ չէ հասել այն դրու-
թեան, որի մէջ տառապում է Զարասիան: Բայց
ժամանակը առաջ է գնում և մեղ մօտ այն,
ինչ երէկ անհաւատալի էր թուում, այսօր իրա-
կանութիւն է: Ուրեմն լաւ կը լինի, եթէ օ-
րէնսդրութիւնը իմաստուն կանխատեսութեամբ
այժմից իսկ սկսէ միջոցներ ստեղծել ապօրէն
դատակների դրութիւնը աւելի լաւ և մարդասի-
րական միջոցներով բարեփոխելու համար...

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, նոյեմբերի 8-ին

Անցեալ կիրակի, նոյեմբերի 7-ին, երեկոյեան
ժամի 11-ին, մի երկու հոգով վերադառնում
էինք Բարեգործական ընկերութեան ժողովից.
անցնելով Մոսկով. ու. Գեորգ եկեղեցու մօտից և
նկատելով, որ այդտեղ պատկազրութեան հան-
դէս է տեղի ունենում, հետաքրքրութիւնից շարժ-
ված՝ մտաւր եկեղեցի և ինչ, փոխանակ պա-
կադրութեան հանդէսի՝ հանդիպեցինք հետեւեալ
տեսարանին:

Եկեղեցում կողմնակի մարդիկ շատ քիչ կա-
լին, պակավորները չքաւոր մի թիֆլիսցի օրիորդ
մենը 60 սանով (22 կոպէկ):

Պատուը Հիւր (Պարիզից) յարձակվում է տը-
ղամարդկանց ետականութեան վրա: «Ամեն տեղ
—ասում է ճառարասը, ուսեղը ճնշում է թողին:
Անգլիան ուղում է ջնջել տրանսպալաններին,
Ամերիկան ֆիլիպիններին, Թիւրքիան փղերի
բրիտանեայ աղբերին (առւն ծախահարութիւն-
ներ): Այդպէս էլ տղամարդը ճնշում է կնոյն:

Իմ Իւլյո յարձակվում է բարբերի կանոնա-
դրութեան սխտէտի վրա անհատի աղատութեան
տեսակէտից:

Նիստը վերջանում է աղմկալի ցոյցերով ի
պատիւ տիկին Բեօտլէրի, որ ծերութեան պատ-
ճառով անկարող էր խօսել այդպիսի բազմա-
մարդ ժողովում:

Ութերորդ նիստը, որ նուիրված էր կանանց
բանտարկութեան հարցին, ամենից հետաքրքրին
էր ու արդիւնաւոր: Զեկուցանողներն էին օ-
րիորդ Պարիզի, օրիորդ Շիրմախէր և տիկին
Ժըվէն Կասայ:

Ահա այդ զեկուցումների բովանդակութիւնը
ամփոփ կերպով:

«Բաղվականական յարատւ հոսանքը գիւղից
դէպի քաղաք, ասեց օրիորդ Պարիզի, այն հե-
տեանքն է ունենում, որ քաղաքներում աշխա-
տող ձեռքերի առաջարկը աւելի շատ է լինում
քան պահանջը: Աշխատանք փնտռողները մը-
ցումը ինչնցում է բանտարկութեան այն աստի-
ճանի, որ նա չէ բաւականաւորում ապրուստի
նոյն իսկ ամենամանրամէջ պահանջների հա-
մար: Իրերի այդ դրութիւնից ամենաշատ վնաս-
վողները բնականաբար լինում են ջանք աղ-
չիկները,—բանքը առհասարակ շատ քիչ են
նրանց անառակութեան մեղքը ընկնում է հա-
սարակութեան վրա, որ թող է տալիս, որ օրը
տառնվեց ժամ աշխատող կինը վատաւի ընդա-

ու ամսական 15—20 բուրբի ստացող, ուրիշի մաս իբրև բանուստ աշխատող մի կոչակար էին, թէ օրիորդի, թէ երիտասարդի և թէ երկու կողմերի ազգականների անշուք, պարզ և եղանակին ոչ համապատասխան հագուստից, դեղնած, կարերի կնիքը կրող դեմքերից, նիհար կազմուածքից և սաշած, երկնոտ և անցած ու ներկայ վիտերը բորձակի իրանց մէջ ցրլացնող հայացքներից երևում էր, որ պատկզոններ իրանց մոտիկ ազգականներ հետ միասին հասարակութեան նրկապէս ընկած, չբարձր դասակարգից են, որոնք դատապարտված են իրանց գոյութիւնը պահելու համար՝ անցնել կենսական կարիքների խեղդուն շրջանից, որոնք կենքի ամեն մի գէպընձ ենթարկված են կրեղ կենսիկ դաճուկութիւնների:

Քահանան, երկար խոլորմաճներից յետոյ՝ վերջապէս դիմաւոր է չորս բուրբու պատկազարած վերջնիկ փետայի կողմից և պակեղ նրան: Ինչպէս յայտնի է, բացի պատկազարածի մի կամ երկու բուրբի էլ առնում են կնքածօրից իբրև վաճառ մոմերի, տիբացուի, ժամկոչի փող, կնքահայրն ևս, լինելով չբարձր մարդ՝ կարողացաւ առաջարկել այդ բուրբի համար միայն երեք բուրբի, որից դուրս եկած բոլոր ծախսերը, բանալային միտմ էր միայն 1—1½ բուրբի, իսկ քահանան պահանջում էր ութ բուրբի տալ: Սկզբից զօրեղ սակարկութիւն. մենք հասանք այդ սակարկութեան բոլորովն ժամին: Հարսն ու փեսան նստած էին եկեղեցու յետին մասում, չորսպատկազար ազգականներով, քահանան մտած խորանը՝ պահանջում էր անողորմ կերպով ութ բուրբի: Բոլորը միաբերան խոյրում, աղաչում, պաղտում են նրան, ի նկատի ունենալով իրանց չբարձրութիւնը՝ բաւականա՛նալ երեքով և դուրս բերել իրանց այդ ամօթալի վիճակից, քահանան շարունակում է իր կամակորութիւնը, չէ պակսում, ութ բուրբի է պահանջում: Ներկայ եղողները մէջ խոլորող դրութիւնը փոխվում է աստիճանաբար յուզման, սկսում են սպառնալ: Քահանան դուրս եկաւ կնքապէս խորանից և, բարկացած՝ «ձեր փողը չեմ ուզում» ասելով՝ կանչեց զոյգը և պատկեց, բայց վայ այն պատկերներ: Պատկերը յետոյ կարդ է, որ քահանան գնում է պատկզոն զոյգի տանը շարականներ երգելու, բայց քահանան տեսնելով, որ իր դրած դրած խորաններով չորսպատկազար չէ հասաւ: Երեք-բեք ասելի փող չեն տալիս (բացի չորս բուրբի պատկազարածից)՝ «մամլին ողորմ» ասելով՝ անհետացաւ:

Նոյնպիսի մի դէպք էլ նոյն օրը, ինչպէս իմացանք՝ տեղի է ունեցել Հրեշտակապետաց եկեղեցում, մէջի երկու չբարձր զոյգ խաւանների պատկազարութեան հանդէսին: Սկզբից լինել է եղել ժողովրդով, քահանան, ի դարձումս բոլորի, պահանջում է 15 բուրբ պատկազարած, այստեղ ևս սկզբում խոլորի ձևով, ապա սպառնալով ստիպում են քահանային պակեղ, չէ պակսում, եօթը բուրբ են տալիս, էլի չէ համաձայնվում. ժողովրդի մէջ սկսում է իրարանցում, խոսում են այն մասին, թէ ինչու դատաւարին են լինում, եկեղեցական դասի անկման պատճառները որոնում են այդպիսի արարքների մէջ: Քահանան անստան է. վերջապէս, տեսնելով այդ խախտականութիւնը՝ ժողովրդի միջից մինը դուրս է դալիս և, ծածուկ քահանայի ձեռքը տալով մի որոշ գումար՝ նրան համաձայնեցնում է պակեղ:

Աւերող է բացատրել թէ ինչ տպաւորութիւն տոկուն ընաւորութիւն և բարոյական վեհ զգացմունք: Երբ լրանում է նրանց տասն և չորս տարին, ծնողները ուղարկում են նրանց տանից դուրս՝ հաց պատակելու և տան ծախսեր թեթեմանցին համար: Նրանցից շատերը աղախին են դառնում մեծ մասամբ շատ չնչին վարձով, որովհետև ոչ կարել են իմանում, ոչ եփել, ոչ էլ ուրիշ անարարական գործեր: Այդտեղ նրանցից շատերին հրապարակում են իրանց տէրերը կամ տէրերի որդիները: Մեր ընկիւտագի նրատերում այս ձևով տեղի ունեցած վիճաբանութիւններից պարզվեց, որ անառակ կանանց ամենաանարար բաղնացողի մասը կազմում են նախկին աղախիները, որոնց, 15—17 տարեկան հասակում, իրանց տէրերը հրապարակ են ու յետոյ արտաքին տանցի:

Անազնի թուով աղջիկներ մտնում են գործարաններ և արհեստանոցներ: Գերմանիայում մոտ 600,000 բանուորակներ կան գործարաններում: Ինչ է դրանց վիճակը: Իրենք թեմանքներին Արհեստանոցներում բանող կնիք, եթէ վարձ է ու աշխատատէ է, վատտակում է շաբաթը 15 ֆրանկ (5 ր. 70 Կ.) բանելով օրեկան տասնութէկ ժամ: Նրա մնունդը և բնակարանը նրա տուն են շաբաթը 10½ ֆրանկ, եթէ նա ապրում է շատ համեստ կերպով, այսինքն եթէ կերակրվում է գլխավորապէս հացով ու սուրճով և վարձում է ոչ ամբողջ սենեակ, այլ միայն մի անկողնատեղ (Schlafstelle) խոհանոցում կամ մի ուրիշ ընդհանուր սենեակում: Հագուստի, լուսաքի և այլ կարիքների համար նրան մնում է ընդամենը շաբաթական 4½ ֆր. (1 ր. 70 Կ.), —որ մի կերպ կարող է բաւականա՛նալ, եթէ նա համեստ է և ճարպիկ: Բայց ինչ անի նա, երբ հիւանդ է լինում կամ ժամանակաւորապէս զրկվում է գործից: Սակայն դրանք փոքրամաս-

ն թողնում ժողովրդի վրա այսպիսի տեղեկութիւնները անհնար է հաշուել: Նրա կը լինի դրանց վերջը:

Ականատես

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Կ. Պոլսի հայոց լրագրիներում տպված է պատրիարքարանի հետևող պաշտօնական ծանուցումը. «Հանդիստ ամենապատիւ և սրբազան տեառն տեառն Խորեհայ արքեպիսկոպոսի Աշխատանքի նախկին պատրիարքի Կոստանդնուպոլսոյ, որ լցեալ զաւուրս կենցաղ յս և վաստակեալ ի պաշտօն եկեղեցւոյ՝ ննջեաց ի Տէր ի հասակի յիսուն և եօթն ամաց՝ յաւուր երեքշաբթի, հիւնիս տառապագին անտիւս: Լրագրիները արպել են և կենսագրութիւնը: Բայց աւելորդ է Աշխատանքի մասին տեղեկութիւններ բերելը. անուններ կան, որոնք ինքն ըստ ինքեան կենսագրութիւն են: Կասենք միայն այլաբան, որ թաղումը մեծ հանդէսով է տեղի ունեցել և Օրմանան պատրիարքը մի դամբանական ճառ է արտասանել, փառաբանելով Աշխատանքի նոյն իսկ պատրիարքութիւնը:

Մեր խմբագրութեան մէջ ուսանողների օգտին ժողոված գումարներից, ուղարկեցինք կիեղւում սովորող ուսանող Գիւլգարեանցին յիսուն բուրբի, ծախսելով փոխադրելու և հեռագրի համար 2 բուրբի 75 կոպէկ: Նախկին 425 բուրբի 89 կոպէկ գումարից, որ գտնվում էր մեզ մոտ, այժմ մնում է խմբագրութեան մէջ 373 բուրբի 14 կոպէկ:

«Новости Дня» լրագիրը հաղորդում է, որ Դ. Ջանջեանի բաղնաթիւ յարգողները մտադիր են պատել նրան Մօսկվայում, նոյեմբերի 20-ին, մի ճաշկերպով:

Վաղեկավազի երկաթուղային ընկերութիւնը՝ Մօսկվայի և Քիֆիսի միջև ուղղակի հաղորդակցութեան համար առանձին վագոններ է պատրաստում, որոնք կուենան ամեն տեսակ յարմարութիւններ և մի և նոյն ժամանակ կը տարբերվեն գոյութիւն ունեցող վագոններից իրանց չեղութեամբ:

Ստացանք Մ. Ջանաշվիլիի «Грузинские обители вѣѣ Грүзін» երկաթուղիները, որի մէջ բերված են տեղեկութիւններ այն վրաց վանքերի մասին, որոնք գտնվում է Պալեստինում և Քիւրբայի ուրիշ մասերում: Գրքոյի բաղնացած է 46 երեսից, տպված է Քիֆիսում, Վրաստանի Էկզարխի թղթուղեւանքով գինն է 25 կոպէկ:

«Մշակի» երէկվայ № 210 համարում մտել է մի խոշոր տպագրական սխալ: Տ. Գեօղաւանցիի նամակի մէջ «Պետերբուրգում վերաբնակված» բառերը, շարված են՝ «Պետերբուր-

նութիւն են կազմում: Բանուր կանանց մեծամասնութիւնը վատապիւմ է շաբաթը միայն 6—10 ֆրանկ (2 ր. 30 Կ.—3 ր. 75 Կ.): Ինչպէս է ապրում այդ մեծամասնութիւնը: Նա անհաստատ է լինում անառակութեան: Կարիքն է, որ մղում է նրանց այդ անդունդը:

Եի նկատի ունեցէք, պարոններ և տիկիններ, որ ես չեմ խօսում այստեղ բացառութիւնների մասին. իմ հայրենակից կանանց թիւը, որոնք ապրում են այդ պայմաններում, համարվում է հաղթանակով: Նրանք ճակատադրապէս մասնավոր են անառակութեան, անարդ կենքի և վաղահաս մահվան, մինչդեռ բարեխիտ հասարակութիւնը միայն արհամարհանքի է արժանացնում նրանց: Կարգին կանայք, երբ նրանց շորերը ըսվում են այդ արարքներից մէկին, թեքում են երեսները խորին զգուշացով. նրանք մոռանում են, որ թերևս հէնց այդ թշուառ արարածն է կարել այդ շորերը, թրջելով իր աշխատանքը աղի արդունքով և անիծելով այն կնոջ, որ հաղնելու է այդ շորերը և որ այնքան չէ վճարում, որ խեղճ բանուորակին կարողանայ աղին կենքը վարել:

«Հասէլ աղջիկների մի ուրիշ դաս էլ կայ, որի վիճակը աւելի ևս վատթար է. պանդոկներում ծառայող աղջիկներն են դրանք: Բերլինում դրանք ամենաարհամարհված և ամենաթշուառ կանայք են: Այն սրճարանները, ուր կանայք են ծառայում, անառակութեան տեղեր են, ուր երբեք ոտը չի դնի կարգին կինը: Այդ խեղճ աղջիկները ոչինչ չեն ստանում բացի յաճախողների պարգևներից և որոշ տոկոսից, որ տալիս է նրանց պանդոկագետը նրանց ծախած ուտելիքի և ըմպելիքի հաշիւ: Նրանք պէտք է ստիպեն յաճախողներին շատ լավ, նստելով նրանց մոտ ու խմելով նրանց կենացը: Հիւան-

դում վաճառված», որով բոլորովին փոխվել է այդ նախադասութեան իմաստը: Ցաւում ենք այդ ակամայ սխալի համար, վերաբերեալ ախալ-քալաքի Վ. Վարդանեանի անձին, որ վերաբնակված է Պետերբուրգում:

Չորեքշաբթի, նոյեմբերի 10-ին, Քիֆիսի Արքեպիսկոպոսի թատրոնում խաղացին «Հրէուհի» օպերան, հեղինակութիւն Հայկիլի: Երգչուհի Ջուլիանի՝ հրէուհի դերում, Լուսիգարդի—Նիլազարի դերում կատարողների իսկական տրամադրութեան մէջ էին և նրանց ձայնը, այսպէս ասած՝ տեղն էր. նրանք հիանալի կերպով կրգեցին և խաղացին իրանց դերերը: Գործայնով շատ տիպական կարգինալ էր: Նրա ձայնը շատ մաքուր էր հնչվում: Այսօր նրա ընենքին է. ներկայացնում են Մեյքերբի «Հուգենօտներ» օպերան: Այս առաջին անգամն է՝ որ Քիֆիսում կը ներկայացվի «Հուգենօտներ» 5-րդ գործողութիւնը, որ առհասարակ բայց են թողնում կատարելու ժամանակ:

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Մշակը» իրաւացի դատաւիտել էր այստեղացիների անտարբերութիւնը դէպի թատրոնը: Թատրոնը առաջմէ կէսից աւելի դատարկ է. պատճառը գտնում են չինութեան մէջ (ցիբի), ուր ժամանակաւորապէս խաղում են թէ հայոց և թէ ռուսաց խմբերը: Բայց մի շատ կարևոր կէտ կայ ի նկատի առնելու: Այժմ թատրոն յաճախողներ մեծ մասամբ բարձր դասակարգի են, այսինքն հարուստներ և ինտելիգենտ երիտասարդութիւնը. այստեղ միջին աստիճանի դասակարգն է—այսինքն մեծ բաղնաթիւներ, որ չէ դալիս իմաստը, ճիշդ հակառակ Քիֆիսի, ուր հայկական ներկայացումների դիտարկ յաճախողը այդ միջին դասակարգն է և հասարակը: Իրա պատճառն էլ պէտք է որոնել երկի նրանում, որ բոլոր առաջին կարգերը թէ օթնակներ և թէ պարտիթ՝ արժանաւորով զբոսված են արդէն, որով փող տուած լինելով, կամայ ակամայ գալիս են:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Նիւ-Իրթիթէն, հոկտեմբերի 15-ին
Սեպտեմբերի 27-ին Նիւ-Եօրք հասաւ ծովակալ Դիուի իր «Օլիմպիա» դրօշակաւու վրա: «Օլիմպիա» ըրէդէր 1898 թի մայիս 1-ին առաջին էր Մանիլայի ծոյրը մտնողը, որին հետևում էին ամերիկեան միւս մարտանաւերը: «Օլիմպիա» ղոյնը սպիտակ է և, պաշտօնականորէ ու ծառաների հետ միասին, ունի 500 մարդ իր վրա: Մթանցից 350-ը կուող նաւաստիներ են, մնացեալը ծառայողներ և օֆիցէրներ: Մայիս 1-ին, 1898 թ., երբ ամերիկեան պողպատապատ նաւերը կրակ գցեցին ծովակալ Մօնթօզի տպա-

ղանոցների զեկուցադրիներից երևում է, որ այդ աղջիկներից իւրաքանչիւրը ամեն երեկոյ երեք-չորս լիւր (ռուսաց ВРѢЖА-ի 2/3 մասը) դինն է լիւմում: Այդ պանդոկները, արճարանները և այլն ուրեմն ոչ այլ ինչ են, եթէ ոչ համբարատարութեան գաղափարի տեղեր, ուր անառակութեամբ պարապող կանայք չեն ենթարկվում տէրութեան հսկողութեան: Այդ և գրա նման ուրիշ երեկոյների շնորհիւ է, որ Բերլինում 45,000 անառակ կանանցից միայն 6000 են ենթարկվում բժշկիկների ընտելութեան: Ոստիկանութիւնը ի հարկէ աշխատում է ձևեղ գցել գաղանի անառակութեամբ պարապողներին, բայց երբ նա աշխուշում է այդ, դրանից միայն վնաս է առաջանում խեղճ աղջիկների համար, որովհետև քանի որ նրանք աղաւտ են ու պարապում են մի որ և է արհեստով, նրանք միշտ յոյս ունեն և կարող են մի կերպ փրկվել շնորհիւ աշխատանքի կամ ամուսնանալով, բայց երբ նրանք ընկնում են ոտիկանութեան ձեռքը և ստանում անառակութեան տոմս, այնուհետև այլ ևս չը կայ փրկութիւն նրանց համար:

«Տեսնենք այժմ, թէ ինչպէս է բանող ջահէլ աղջիկների մի ուրիշ, աւելի բարձր դասի, խաւանութեան գործակատարութիւնների դրութիւնը: Այդտեղ խաւանութեանից շատերը իրանց պարտականութիւնն են համարում հովանաւորել իրանց գործակատարութիւնները, բայց դժբաղդաւր կան և շատ աղաքիկները: Երբեք ի շարք են գործ դնում իրանց խիստութիւնը, հրապուրելով իրանց գործակատարութիւններին: Եթէ ջահէլ աղջիկը մեքծում է խաւանութեան պահանջը, նա դուրս է անում նրան և այնպիսի վատ վկայական է տալիս, որ խեղճ աղջիկը մեծ դժուարութեամբ է կարողանում այնուհետև տեղ գտնել: Այս դէպքում ուրեմն ջահէլ աղջիկների

նիական փայտաշէն նաւերի մէջ և այրեցին շատերը, աղմկալ Նիուիի ամբողջ նաւատորմի մէջ միայն մէկ մարդ մնաւ, և այդ էլ «Օլիմպիայի» մարդկանցից չէր: «Օլիմպիայի» մարդիկը նոյնն էին թուով, ինչ որ երկու տարի առաջ, երբ «Օլիմպիա» ճանապարհ ընկաւ դէպի չինական ջրերը:

Որոշված էր, թէ Նիուին կը հասնի Նիւ-Եօրք սեպտեմբերի 28-ին, բայց երկու օր առաջ հասաւ: Իբրև պատճառ աղմկալ Նիուին պատասխանեց, երբ հարցվեցաւ թէ «Բնչպէս եղաւ, որ չուտ հասաւ»,—«Ես միշտ սովորութիւն ունեմ գործի մէջ երկու օր առաջ լինել, քան թէ մէկ ժամ ուշ»: Նիուին ընդունելու համար եղած պատրաստութիւնները տակաւին կիսատ էին թէն, բայց «Տիւրքիսկալութեան քովիթէն» պէտք էր պարագաների համեմատ շարժվէր, ուստի կանգնվելիք կամարների վրա արտիստները ըսկսեցին գործել ցերեկ և գիշեր: Ծովակալը երկու օր Նիւ-Եօրք քաղաքի հիւրը պիտի լինէր, որբաթ և շաբաթ, սեպտեմբերի 29 և 30: Ուրբաթ պիտի լինէր նաւային թափուր, իսկ շաբաթ—ցամաքային զօրքերի հանդէս: Նաւային թափուրին մասնակցում էին «New-York-Sun»-ի ասեղով, հազար նաւեր—չոգենաւեր, դրօշանաւեր, նաւակներ, մակոյկներ, ըէլէկներ և մարտանաւեր—աղմկալ Սամփսօնի Հիւսիսային Ատլանտեանի սրբազօնի նաւերը, որոնց բոլորին առաջնորդում էր աղմկալ Նիուիի «Օլիմպիա» դրօշակաւու: Այդ 1,000 նաւերից գրեթէ բոլորը, բացի մարտանաւերից և մասնաւոր անձնաւորութեանց դրօշանաւերից, վարձված էին ժողովրդի կողմից թափուր տեսնելու համար: Թափուր կազմող նաւերից մի քանիսի անունները հետեւեալներն են.—«Terror» (տարափ), «Scorpion» (կարիճ), «Thunder» (որոտում), «Dynamite» (դինամիտ) և այլն: Այդ նաւերի մէջ, մեծութեան համեմատ, լցված էին ժողովուրդը 10-ից մինչև 5,000 հոգի: «Sun» ասում է, որ 2,000 հոգի տանող նաւի մէջ լցված էին 4,000 հոգի, '00 մարդնց նաւի մէջ՝ 500, իսկ այն մակոյկը, որ սովորական ժամանակներում միայն 2—3 հոգի կը նստէին, այդ օրը 100 մարդ էր թափվել նրա մէջ:

Թափուր սկսելից կէսօրից յետոյ ժամը 2-ին, վերջացաւ 6-ին: Թոյաւնօթիկները որոտումներից, սուլումներից, պոտումներից և առհասարակ ամբողջ բարձրացած աղաղակներից—որոնք լինում էին Նիուի և կամ այս և այն անցնող նաւային պաշտօնեային բարեկու համար—ակնաշի կը խըլանար: «North River» գետը, որտեղից պիտի անցնէր թափուրը, երկու ասիերին էլ ծածկված էր հաղաթաւոր ամբողջով: Աղմկալ Նիուի կանգնած իր նաւի կամրջի վրա, ամբողջ բարձր գարձում էր կամ իր ձեռքի շարժումով և կամ զլխարկը վերցնելով:

Յամազային թափուրը եղաւ միւս, շաբաթ օր, մասնակցում էին նահանգների ներկայացուցիչ գնդեր, կառավարիչներ, սենատորներ, քաղաքագետներ, զինուորական և նաւային պաշտօնայականութեան վրա վատ աղիցնութիւն է գործում ոչ այնքան բանութաւարձը (որ յաճախ բաւարար է լինում), որքան խաւանութեան ի խիստութիւնը: Կան ուրիշ պատճառներ էլ, որոնց դէմ պէտք է կուել... Տէրութիւնը պէտք է հովանաւորել ի հարկէ ջահէլ աղջիկներին, բայց պէտք է լիւմալ, որ անառակութեան հովանաւորութիւնը լաւ կրթութիւն տալն է, այնպիսի կրթութիւն, որ հմտութիւն տալ և ոյժ ջահէլ աղջիկներին իրանց պահպանելու գոյութեան կուր մէջ և որ մտցնի նրանց մէջ այն աղաղափարը, թէ իր աշխատանքով ապրող կնոջ արժանաւորութիւնը երբեք աւելի չցած չէ, քան նրանը, որ ապրում է 5 օր կամ ամուսնուհետ հաշուով:

«Մենքալ ձեռք գերմանական պարլամենտում ընկնում էր անառակութեան հարցը, բայց պատգամաւորները չը կարողացան որոշ եղրականութեան յանգիլ. ուստի այդ հարցը նորից ընկնելու է առաջիկայ նստաշրջանում: Ոմանք առաջարկում էին աւելի խիստ միջոցների դիմել անառակ կանանց դէմ. բայց եթէ ի նկատի առնենք, որ այդ կանանց ապրում են խորին թշուառութեան մէջ, կը հասկանանք, որ պատիժները, ինչքան էլ դաժան լինեն նրանք, չեն կարող սարսափեցնել այն անձանց, որոնց համար անբարոյականութիւնը միակ միջոցն է սովորած չը լինելու:

«Եթէ դուք, տիկիններ և պարոններ, ուզում էք կուել անառակութեան դէմ, ոյժ մի տուէք քրէական օրէնսդրելն, այլ աշխատեցէք բարոյեղ կնոջ վիճակը, յարգանքը դարձնել դէպի կնոջ աշխատանքը, և կուի մեղեք կնոջ և այդ մարդու հասարակական իրաւունքների հաւասարութեան համար»:

(Կը շարունակվի)

տօնեաներ, մի բառալիսն «Օլիմպիայի» նաւադ-
ներին և քաղաքական պատերազմի վեթերան-
ներ, բոլորը և իւրաքանչիւրը իրանց զանազան
զոյներով, համազգեստներով և զօրակներով:

Փողոցները, կտուրները, տան-դռները զար-
դարված էին զօրակներով: Կանգնեցած էր մի
կամար ի պատիւ «Իրուի» «Իրուի Արկա»
անունով: Գլխերը լինում էին հրաւա-
ռութիւններ: Բէլլովէր, Ֆրէշնէ ֆլայուս էին
ամեն կողմից: Բոլորը իրենց հոգեկալով կամուրջը
զեղեցին կերպով զարդարված էր, և զիշերները
պարզ փայլում էին «Welcome Dewey» բառերը
կերպարան լոյսով լուսաւորված:

«New-York Sun»-ի ասելով Նիւ-Եորքում այդ
երկու օրը կար հինգ միլիոն ժողովուրդ: Թա-
փորը տեսնելու համար զանազան նահանգներից
Նիւ-Եորք գալ փափաղող ճանապարհորդներին
փոխադրեցու նպատակով երկաթուղային ընկերու-
թիւնները այդ առիթով տոնականներ զններ
վրա յատուկ զինված էին արել:

Նիւ-Եորք քաղաքը իր քաղաքագլխի միջոցով
ծովակալ Իրուիին ընծայեց մի սիրող բաժակ:
Բաժակը 18 քարաթ ոսկի էր: Բարձրութիւնն էր
տասնութ բաժակ, ունէր երեք կանթ և կը
բռնէր չորս ու կէս քաղ: Յաջորդ երեք բաժակ
օրը աղմուկով Իրուիին Նաւալիկներն պիտի գնար
իբրև հիւր: Այստեղ իրան ընծայվեց զինուորա-
կան և նաւային պաշտօնեաների և նախագահ
Մաք-Քլինիի ներկայութեամբ մի թուր քանդակ-
արի վճռով: Այս թուրը Իրուիին ընծայեց օրո-
շեց քանդակը 1898 թվ. մայիսի 1-ի յաղթու-
թեանից անմիջապէս յետոյ: Թուրը նաւային
քաղաքագալ Լօնկի ձեռքից առնելու համար ծո-
վակալ Իրուի պէտք է գնար Քապիտոլ—պետա-
կան շէնքը, ուր հաւաքված էին քաղաքի ան-
դամները, հիւրերը և հանդիսատես ամբողջը:
Որպէս մի առանձին պատուի, նախագահ Մաք-
Քլինի թող տեսնե, որ Իրուի իրան հետ մեկ
կատարի մէջ նստէ Սպիտակ Տունից Քապիտոլ
գնալու համար: Մովակալ Իրուիին ընծայվելը
թուրը 22 քարաթ ոսկի էր ետեւի կողմից, իսկ
առջևի կողմը մասը պողպատ էր: Վրան քան-
դակված էր Rear-Admiral Gerge Dewey may 1,
1898: Թուրը կովը զարդարված էր ոսկեով և
վրան գրված էր իր անունը և աստիճանը: Թու-
րը արժէ 10,000 զօլլար:

Ուաշինկթօնում ընդհանուր տուն գնելու և ծո-
վակալ Իրուիին ընծայելու համար ազգի կող-
մից մի անգամահարութիւն է սկսվել դեռ Իրուիի
գալուց շատ առաջ, երբ նա Մանիլայէն էր
Փօնոք արդէն հասած է 49 հազար զօլլարի:
Ճիշդ, հիմա Ամերիկայում ուրիշ մարդ չէր կայ,
բայց միայն Իրուին: Իրուի, ամեն կողմ Իրուի:
Թերթերի մէջ նայեա Իրուի է: Խօսակցու-
թեան իրերը փողոցում Իրուի է: Խանութները
զօրդարված են Իրուիի պատկերներով: Մար-
դիկ, տղաներ, աղջկաներ իրանց կրծքից կա-
խած են Իրուիի պատկերը կողմ մեղաւորներ:
Պատկերազարդ թերթերը, հանդէսները, մաշա-
կները իրար տարաբաղուն են «Իրուի» թիւ-եր,
նուրբված Իրուիին, «Օլիմպիա»-ին և իր մարդ-
կանց: Դուրէ Իրուին չուտով տեսնէ իր արձանը
կենդանի աչքով: Քարտուղար Լօնկ թուրը ըն-
ծայելիս իր ճառի մէջ Իրուին գովելով ասաց.
«Այս քաղաքը զարդարող մեր հերոսների ար-
ձանները կատարեալ չէ կարող լինել,
մինչև որ նրանց վրա չաւաղացվի ձեռքը: Իրուիին
հանդիսատես չունի: Ամեն կողմից, ընկերութիւն,
քուլայ և այլն հրաւիրում են բանակցելու: Իրուին
ճառ կամ ըստ թիւրքախոսի աստիճանութիւն
—չէ կարող անել: Իրուին ըստն տարի է, որ
այդի է, ունի միայն մի տղայ: Նստա աղջկաներ,
նոյն իսկ այրիներ փափագում են տիկին Իրուին
դառնալ: Իրուին Վէրմօնը նահանգի Մօնթ-
պլէյթը քաղաքում է ծնված:

Իրուիի սպանիացոց վրա տարած յաղթու-
թեանը վերագրում են հետեւեալ հետաքրքրական
գէպերին, որ տեղի է ունեցել շատ առաջ: Ցա-
րինքը առաջ, երբ Իրուի երիտասարդ էր և ա-
մուրի, կը սիրահարվի Ուաշինկթօնում ապրող
մի սենատորի աղջկան, բայց աղջիկը կը մերժէ
Իրուին, երբ սա կը յայտնէ իր սերը և յար-
գանքը, որովհետեւ այդ ժամանակ Իրուին ունէր
միայն մի աննշան լիւթնանի խոտիկ: Այդ
աղջիկը յետոյ կամուսնանայ Ուաշինկթօնի
սպանիական ղեկավարատան քաղաքագլխի
մէկի հետ:

Երիտասարդական սիրոյ—մերժված, արհա-
մարժիված սիրոյ—յիշատակն էր, ասում են, որ
Իրուիի եւանդը և ոյժ տուեց իր խորտակված
սիրոյ վրէժն առնելու՝ խորտակելով սպանիա-
կան նաւատորմը, որով զուցէ իր թնդանօթնե-
րի որոտումը տանէին իր համբաւը իր պատա-
հակական նշանածի ականջին:

«New York Sun» ստացել է Իրուիի քաղա-
(ի)

թիւնը և Մանիլայի յաղթութիւնը երգող
3,000,000 (երեք միլիոն) բանաստեղծութիւններ:
Տպագրել էր մի-երկու հատ միայն «Life», մի
պատկերազարդ շաբաթաթիւթ, ունէր մի այս-
պէս իրուտարածութիւն: Իրուի կանգնած մի կառ-
քի մէջ,—հին ձևի կառք, որով հազարաւոր տա-
րիներ առաջ պարսից թագաւորները գնում էին
ձիեր, որոնց կառավարում է մի մանուկ, ծա-
ղիկների մի պսակ իր գլխին: Առջևից գնում է
մի մունետիկ կանչող, ձեռքին մի չեփօք, որ
փչում է. յետեւից գալիս է Uncle Sam, իր բար-
ձր աստղազարդ ցիլինդրը թողած ծոքրակի
վրա, միտքը և սերթուկը ձեռքով ծալելով
ձաձանկելով բամբից, և ձեռքին բռնած տու-
րիստի մի պարկ, որի վրա գրված էր Gerge
Dewey, Manila. Uncle Sam, կարծես բանի
տեղ չը գնելով պարկի ծանրութիւնը, ծպտալով
վազում է կառքի յետևից:

Յակ. Մէլլը-Վարդանեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՍԻՐ

—Որքան էլ անգլիական ժամուրը եռանդուն
չափեր գործ գրեց Նապոնիային գրգռելու Ռու-
սաստանի դէմ, բայց նրան այդ բանը չաղողվեց:
«Times» լրագրում տպված է հետեւեալ հեռագրի-
քը. «Անհիմն են այն լուրերը, որ իբր թէ Ռու-
սաստանի և Նապոնիայի յարաբերութիւնները
լարված են, որովհետեւ Ներկայումս երկու պե-
տութիւնների մէջ գոյութիւն չունի ոչ մի միջ-
ազգային խնդիր: Արդարեւ, մօտ ժամանակնե-
րում փոքր ինչ զգոնութիւն ծագեց Նապոնիա-
յի՝ Կորէում մի քանի ռոյալիս կտորներ ձեռք
բերելու առիթով, որ կատարվել էր առանց
Ռուսաստանի դիտութեան, բայց, յամենայն
դէպս, այդ հարցը բոլորովին մասնաւոր բնու-
թեանում է:

—Հաշակաւոր Մահիլի փոխադրողը, ինչպէս
երևում է, կամենում է օգուտ քաղել Հարաւ-
Աֆրիկեան պատերազմից և վրէժ առնել Օմ-
պուրմանի համար: «Times» լրագրին հեռագրում
են Կայրէթից, որ Սալիֆը ճանապարհ ընկա-
լորքով և հասաւ Ալքաթի կղզին, որ գտնվում է
Խարտումից դէպի հարաւ 150 մղոն հեռաւորու-
թեան վրա: Ուրիշ աղբիւրներից լսվում է, որ
Սալիֆը, որը մինչև այժմ գտնվում էր Կոր-
ֆանում, այժմ գտնվում է Իւլիսիանում, Սպի-
տակ-Նեղոս գետի վրա, Խարտումից դէպի հա-
րաւ, 130 մղոն հեռաւորութեամբ: Առհասարակ
Հիւսիսային-Աֆրիկայի մասնաշտականների
մէջ մի ինչ որ իրարանցում է նկատուում: Կա-
լիֆօնի ստացված տեղեկութիւնները հաստատում
են այն լուրը, որ Սինուսի դերձիկները պարա-
զուլով թողել է Կուֆը քաղաքը և իր համա-
խոհներին հետ գնացել է Արևմտեան Սուլթան:
Այդ հանգամանքը մեծ նշանակութիւն ունի
երկրի համար:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱՍԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԵՑ

10 նոյեմբերի

ՊԱՐԻԶ: Հաւասար գործակալութիւնը «Matin»
լրագիրը հաղորդում է, որ միասնաբերակ խոր-
հուրդը ձեռք է առել բոլոր միջոցներ, որպէս
զի խանգարէ գործադուլ անողների արշաւանքը
Օղէնկուրից դէպի մայրաքաղաքը: Հեծելազօրքը
հսկում է ճանապարհներին, և նրան պատուիրած
է թող չը տալ բանաւորներին դէպի առաջ գնալ:
Բէլֆօրի բերդապահ զօրք չէ հեռանում զօրա-
նոցներից: Պրէֆէկտը նորից յայտնել է, որ չի
թող տալ անցնել գործադուլ անողներին:

ԲԵԼՅՈՐ, նոյեմբերի 10-ին (22-ին): Հաւասար
գործ.: Պրէֆէկտի հրամանով արգելվում է
գործադուլ անողներին խմբեր կազմել, որոնք,
սակայն, պատրաստվում են վերադառնալ Օղէն-
կուր: Վերադարձը արդէն սկսվել է:

ԿԱՅԻՐԷ, 2 նոյեմբերի: Հաւասար գործ.: Ա-
մերիկական շոգենաւերի օֆիցերները, որոնք
անցնում են Սուէզեան ջրանցքով, հաւատա-
ցում էին, թէ երկու կը կրում, որ Միացեալ
Նահանգները և Նապոնիայի մէջ բարդութիւն-
ներ կը սկսվեն:

ՕՐԱՆՇ-ԲԻՎԵՐ, 22 նոյեմբերի: Վէյտէրի գոր-
ծակալութիւնը: Բռնիները գրաւել են Բէլմօնտ,
Կաֆարսկօյ և նրանց հարեան քուրները, հէնց
մի և նոյն գիշերը, որ նրանք գրաւած ունէին
սրանից երկու շաբաթ առաջ, երբ նրանք կը-
ւում էին Գոուզայի խուզարկու զօրաբանի
դէմ: Ուլանները մի փոքր զօրախումբ, որ խու-
զարկութիւններ էր կատարում, անսպասելի կեր-
պով ենթարկվեց թնդանօթաձուլութեան. երեք
նուրբ ընկան զօրախմբի առաջ, ոչ մի վնաս
չը պատճառեցին նրան: Զօրաբանները վերա-
դարձաւ ՕրանՇ-Բիվեր առանց կորուստի: Ըստ
երկու թիւր բռնիները օգնական զօրքեր են ստա-
ցել և Բէլմօնտում թնդանօթներ են դրել:

ԴՈՒՐԲԱՆ, 22 նոյեմբերի: Վէյտէրի գործա-

կալութիւնը: «Natal News» լրագրին հեռագրում
են Կրէյտաուից, որ բռնիներ Նատալ քաղա-
քում բնակվող հոլանդացի ծերունքին նշանա-
կեցին Գերլակաւական և Պուսպիտաարեան
շրջանների դատաւոր: Այդ դատաւորը վճիռներ
է կայացնում բռնիների օրէնքով: Կրէյտաուեան
շրջանի գերմանացիներին կանչեց բռնիների հրա-
մանաւարը և առաջարկեց նրանց երգիչ
Տրանսվալիս, կամ թողնել ազարակը խօքը
օրվայ մէջ: Գերմանացիները ժամանակ պահան-
ջեցին խորհուրդ, որից յետոյ միաձայն որոշեցին
չերգիչ: Նրանք ուղարկեցին բռնիների մօտ ի-
րանց պատուօրին, որը յայտնեց նրանց, թէ
բռնիներ իրաւունք ունեն, եթէ ցանկանան,
հրացաններ առնել նրանց, բայց որոշել են չը
թողնել իրանց օլաւը: Ապա լրագիրը հաղոր-
դում է, որ այն գերմանացիները բացակայու-
թեան ժամանակ, որոնք ծառայում են Կապիտա-
լիայի Ուսմիստ շրջանի զօրաբանում, նրանց
տները կողոպտեցին և նրանց կանանց ու երե-
կաններին դուրս արին տներից անձրևի տակ:
Կողոպտուի մասնակցում էին տեղացի հոլան-
դացիները:

11 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ներքին գործերի մինիստրու-
թեան կառավարիչը, ժողովրդական լուսաւորու-
թեան, արդարադատութեան և ֆինանսների մի-
նիստրները և Սերալան Սինոդի օրէր-պրօկու-
բօրը որոշեցին դադարեցնել «Русский Труд»
լրագրի հրատարակութիւնը:

Հակաժամախախտային յանձնաժողովից հաղորդ-
վում է, որ գիտնական-բժշկական խորհրդակ-
ցութեան յատուկ նիստի մէջ, որ կայացաւ
նոյեմբերի 2-ին ֆինանսների մինիստրի նախա-
գահութեամբ, զեկուցվեցին Կօրօբովո գիւղ-
ուղարկված բժշկապետներ պրօֆէսոր Վիտորա-
գովի և զինուորական-բժշկական գիտնական Կո-
միտէի անդամ Բալչիկովոյ Նաչնիկը: Ինչ-
պէս յայտնի է, դրանց էր յանձնարարված հե-
տադոտելու հիւանդութիւնների ամբողջ ընթաց-
քը վերոյիշեալ գիւղում: Զեկուցումը լսելուց յե-
տոյ, որի մէջ նկարագրված էր Կօրօբովո գիւ-
ղում եղած հիւանդութիւնը, նոյնպէս և պրօֆէ-
սոր Լէվինի բացատրութիւնը լսելով, խորհրդակ-
ցութիւնը, սակայն, չը կարողացաւ միաձայն
եզրակացութեան գալ: Խորհրդակցութեան ան-
դամների փորձաքննութիւնը այն կարծիք
յայտնեց, որ Կօրօբովո գիւղում եղած սուր-
վարակիչ հիւանդութիւնը իր բնաւորութեամբ
չափով է ժամանաւորին պնէկլօնիական ձևի
մէջ, իսկ մեծամասնութիւնը ստեց, թէ Կօրօ-
բովո գիւղում եղած սուր-վարակիչ հիւանդու-
թիւնը, անկասկած, ժամանաւոր է:

ՊԱՐԻԶ: Բարձրագոյն դատարանը Հակասէմիտ
Բրիւնէ յարցու փորձի ժամանակ պատասխանում
է, թէ յարգաւորական միջոցներ էր առաջար-
կում կառավարութիւնը կործանելու համար:
Հակասէմիտ Կայր յարձակվում է հրէաների
վրա: Հարցու փորձերը վերջացած են. նիստը
փակվում է:

ԼՈՐԷՆՑ-ՍՄԻԹ: Վէյտէրի գործակալու-
թիւնը: Լէվին-Սմիթի մօտ բռնիների գլխաւոր
բանակից նոյեմբերի 9-ից ստացված հեռագիրը
հաղորդում է, որ նոյեմբերի 7-ի գիշերը լսվում
էր, թէ ինչպէս Լէվին-Սմիթում շարժման մէջ
ընկան թնդանօթներ և հեծելազօրքեր մեծ թիւ:
Առաջապահ գիւնորները նկատեցին, որ անդ-
լիալցիները դուրս գալու ճանապարհ են որո-
շում: Դէպի Լոմբարդսկօյ և Բուլվանա քուր-
քը: Այնտեղ գրված Մաքսիմի թնդանօթները
սկսեցին գործել: Նւ որովհետեւ հեռաւորութիւնը
չափ մեծ էր, այդ պատճառով էլ սկսեցին ռուս-
ներ արձակել ծաղիկ թնդանօթներին, և լուսա-
բացին մօտ անգլիացիները յետ մղվեցին: Բա-
ղաւային բաւարեանները ռուսներ էին արձա-
կում բռնիների զիջել վրա և վերադառնել եր-
կուսին: Նշմարում են, որ անգլիացիները
դուրս գալու անաշուղ փորձ արեցին՝ Էստկօրտի
զօրքերին օգնութիւն սկսեցին նպատակով, ո-
րոնք այդ մասին թախանձագին խնդրել էին
ուղարկել Լէվին-Սմիթ: Այդ խնդրքը բերողին
բռնիներ բռնեցին, իսկ յետոյ նորից բաց թո-
ղեցին: Ժուրէր հաղորդում է, որ Էստկօրտի
զօրքերին դէպի Պիտերմարիցբուրգ յետ քաշվե-
րու ճանապարհը կտրեց և յետ քշեց նրանց Տու-
գէ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Վէյտէրի գործակալութիւնը: Գե-
ներալ Մինիստր հաղորդում է անցեալ երկուշաբ-
թի Մէֆկինգի մօտ տեղի ունեցած խիստ պա-
տարաւոր մասին: Անգլիացիները ստատիկ թնդ-
անօթաձուլութիւն սկսեցին տրանսվալացիների
ամբարկութիւնների թնդանօթների վրա: Բռնիները
աշուղթեամբ պատասխանում էին նրանց: Բո-
ւրիների կողմից սպանվեց մէկ մարդ: Անգլիացի-
ների կորուստները յայտնի չեն:

Պաշտօնական տեղեկութիւնների համեմատ,
բռնիների կորուստները պատերազմի սկզբից
90 սպանվածներ և 200 վիրաւորվածներ են.
վերջիններից շատերն առողջացան և կրկին մը-
տան զօրքերի շարքը:

«Standard and Digger News» լրագրի մաս-
նաւոր տեղեկութիւնների համեմատ, սպասվում
է Նատալի հօլանդական ֆէրմերների ընդհա-
նուր ապստամբութիւն: Կապիտալիայի բռն-
ները այն շրջաններում, որոնք յայտարարված
են հանրապետութեան երկրի, միանում են ար-
դէն բռնիների հետ:

ՎԱՇԻՆԴՏՈՆ: Վէյտէրի գործակալութիւնը:
Լուր է պտտում, որ տրանսվալիս կառա-
վարութիւնը հրապարակեց Պրէտորիայի
ամէրիկական հիւպատոս Մակրուսի որ և է ա-
ռաջագրութիւնները բռնիների վարձուքի վե-
րաբերմամբ գերի անգլիացիների հետ, յայտնե-
լով, որ այդպիսի առաջագրութիւններ կարող
են միայն զինուորական իշխանութիւններն անել:
Մակրուս անյապաղ արձակուրդ պահանջեց
մասնաւոր խորհրդածութիւններ առաջ բերելով
մինիստրութիւնը մերժեց սակայն տալ նրան
արձակուրդ: Մինչև այժմ Մակրուս ոչինչ դըժ-
ւարութիւնների չէ հանդիպել անգլիացիների
չանքը պաշտպանելու ժամանակ Տրանսվալա-
լում և Օրանժեան հանրապետութեան մէջ: Տա-
րաձայնութիւնը ծագեց միայն անգլիացիների
այն խնդրի պատճառով, որով ուղում էին, որ
Մակրուսին իրաւունք տրվէր փող տալ գերի-
ներին:

ԴՈՒՐԲԱՆ: Վէյտէրի գործակալութիւնը: Օ-
րանժեան հանրապետութեան բռնիները արև-
մուտքից արշաւում են Նոտտինգէլ ամրութեան
վրա: Նրանք մօտ 3000 են. նրանց մօտ թնդ-
անօթներ կան:

Մօյ-Բիվերից հաղորդում են, որ թշնամին
սկսեց թնդանօթաձուլութիւն անգլիական բանակի
վրա: Սակայն կորուստներ չը կան:

ԼԵՑԳՅԻ: Երէկ այստեղ վախճանվեց քաղա-
քատնտեսութեան պրօֆէսոր Ալգուստ Մեաս-
կովի:

ԲԵԼԷՆ: «Wellamo» շոգենաւը Հէլսինգֆօր-
սից ծանաղուտի մէջ խրվեց Ալանդեան կղզի-
ների մօտ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Լէվին-Սմիթի կամաւոր-
ների հրամանատար օֆիցերից կառավարութիւ-
նը հետեւեալ հեռագիրն է ստացել նոյեմբերի
4-ից (16-ին). «Բոլոր կամաւորները և օտարկա-
նական զօրքերը առողջ են. մարդկանց և ձիա-
նների համար բաւարար քանակութեամբ ուտե-
տի պաշար կայ. նոյեմբերի 3-ին (15-ին) և 4-ին
(16-ին) ամեն ինչ հանգիստ էր: Ուղարկու-
թիւնը դադարեց. նրա հետանցները մինչև այ-
ժմ բոլորովին աննշան են: Մենք տեղեկու-
թիւնների ենք սպասում հարաւոր: Վերադառ-
վածների և հիւանդների համար լաւ հոգատա-
րութիւն է լինում»:

ԿԱՊԵՏՏԱՒ: Սյոյօր այստեղ եկան փոխադրող
նաւեր 3500 մարդով, կամքային մարդկան-
ցով, օդապարիկներով, ահագին քանակութեան
նազմամթերքներով և 8000 ջորիներով:

ԼՈՆԴՈՆ: «Outlook» լրագրում տպված է հե-
ռագիր Կապիտալից, որի մէջ հաղորդվում է,
որ աֆրիկանդերների պարագլուխ Հօֆմէյթը,
յուսաւով չուտով վերջ դնել պատերազմին, մի
նշանաւոր քայլ արեց. նրա նախաձեռնութեամբ
հասարակական աշխատանքների մինիստր Զաու-
էր գնաց դէպի հիւսիս ակնյայտի գիտաւորու-
թեամբ՝ գրել իրան լնտրող աֆրիկանդներին
Ալիվալ-Նօրտում չէզոք պահել իրան: Նա,
սակայն, Օրանժեան բռնիների ախտեղ գտնվող
պարագլուխ Հօֆմէյթի հետ յարաբերութիւններ
սկսելու փորձեր էլ կան և կաշխատի համոզել
բռնիներին զինադադար առաջարկել:

ԼՈՆԴՈՆ: Կապիտալից, նոյեմբերի 9-ից
(21-ին) «Globe» լրագրի ստացած հեռագիրը ե-
րևում է, որ օրդ Մէտուէնի դիվիզիոն առաջ
շարժվեց և հասաւ մինչև Վիտեպուտու:

ԴՈՒՐԲԱՆ: Մօյ-Բիվերից ստացված և երէկ

